

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀՐԱՋՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

Հրապարակվող նամակներում նշանավոր լեզվաբան Հրայր Աճառյանը շոշափում է բազմաթիվ հայագիտական հարցեր՝ հատկապես բարբառների վերաբերյալ, ցանկանալով հալալյանի աշակցությամբ գլուխ բերել իր մի շարք ձեռագրերի հրատարակության գործը։ Նամակները պարունակում են երկու գիտնականների հայագիտական գործունեությանը վերաբերող ուշագրավ տեղեկություններ։

Նամակները պահվում են Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Գր. խալաթյանի արխիվում (V բաժին, №№ 131—134, 141—142, 145, 147, 151)։

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՓԱՍՏԱԹՎԹԵՐ

1

Մեծապատիվ Տեր

պրոֆ. պր. Դր. Խալաթյան,

Սրտագին շնորհակալությունս եմ հայտնում Ձեր այն նամակի համար՝ որով հաճել էիք պատվել ինձ՝ հրավիրելով «էմիսյան աղգագրական ժողովածուի»՝ աշխատակցության։

Դժբախտաբար շունիմ ամբողջովին պատրաստ մի աշխատություն ձեռքումս, որպեսզի կարողանայի ուղարկել Ձեզ։ Միայն եթե սույն «Աղգագրական ժողովածուի» հրատարակությունը դեռ մի քիչ ուշանալու է, կարող եմ խոստանալ ուղարկել մի փոքր աշխատություն։

Այդ աշխատությունը կլինի «Թուրքերենի փոխառյալ բառեր հայ ժողովրդական լեզվի մեջ»²։ Աշխատության հիմը կլինի Պոլսի ռամիկ հայ բարբառը՝ որին, իբր պոլսեցի բնիկ՝ կարող եմ քաջածանոթ համարվել։ Պոլսահայ ձևերի հետ քննության կառնվին նաև նոր նախիջևանի, Ղարաբաղի և Վանի բարբառները, ուրիշ խոսքով հայ աղգաբնակության շորս ծայրերը։

Աշխատությունը, մի կարճ առաջաբանից հետո, կունենա մի ամբողջ բառարան այդ փոխառյալ բառերի՝ նախ հայատառ և այբուբենական կարգով. սրան կից հայոց մեջ ունեցած նշանակությունը. հետո՝ թուրք տառերով նույնը, մոտին ընթերցումը, ինչպես և նրա նշանակությունը, եթե հայերենից տարբեր են. հետո էլ վերև հիշված գավառականների մեջ նույն բառի ունեցած ձևերը։

Բառարանից հետո կիսովի ձայնական օրենքների մասին, որից հետո ցույց կտրվի մի վերջաբանում թե պոլսահայ թուրք ձևերը չեն Պոլսի թուրք բարբառից, այլ Փոքր Ասիայի մի թուրք ուրիշ բարբառից:

Կարելի էր նաև բառարանի և ձայնախոսության մեջտեղը, կամ գրքի վերջին ցանկի մեջ գնել նույն փոխառյալ բառերը նյութի դասավորությամբ՝ ինչ որ հարկավոր է քաղաքակրթության պատմության և ազգագրական տեսակետով: Բայց այս կախում կունենա վարչությանդ հավանությունից:

Աշխատության բոլոր հարկավոր նյութերը ձեռքիս պատրաստ են. միայն կմնա նույնը դնել և արտագրել. սրա համար էլ երկու ամսի մոտ ժամանակի հարկավորություն կա:

Ուստի խնդրում եմ, որ բարեհաճեիք նաև մի երկտողով իմացնել ինձ, թե արդյոք պատ. վարչությունդ հարմար կգտի՞ աշխատությունը տպագրության և թե այդ մոտ երկու ամիսը կշնորհե՞ ինձ:

Սպասելով Ձեր բարեհաճ պատասխանին, խնդրում եմ ընդունել իմ խորին շնորհակալիքս և ամենախոնարհ հարգանքներս:

Որով մնամ Ձեզ խ. ծ.

Հրաչյա Հ. Աճառյան

1900 հունվ. 25

Լ.Միաժին

2

Մեծապատիվ ուսուցչապետ,

պր. Գր. Խալաթյան,

Շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկել բարեհաճած մնացորդաց զիրքը¹ և ներփակյալ նամակը: — Իմ խոստացած աշխատությունը² արդեն մայիսին պատիվ կունենամ ուղարկելու: — Գալով Ձեր ակնարկած քննադատական-մատենախոսական հոդվածներին՝ հայ բարբառագիտության վերաբերյալ աշխատությունների մասին, ծանոթ է արդեն Ձեզ թե որչափ սակավաթիվ աշխատություններ կան այս մասնագիտության մասին. այնպես որ իսկապես նյութ չկա քննադատական-մատենախոսական հոդված պատրաստելու համար: Եթե բախտ ունենանք այսուհետև նորանոր հրատարակություններ տեսնելու, ես չեմ թերանա դրանց մասին մատենախոսական պատրաստելով ուղարկելու խմբագրությանդ:

«Ժողովածուին» աշխատակցելու պայմաններին³ մեջ՝ էջ 11, ուշադրությունս դարձավ 5-րդ պայմանի վրա, որի հիմքով ամեն մի առանձին աշխատություն կարող է հրատարակվել անկախաբար, միայն իբրև ժողովածուի հատոր անվան տակ: Լ'ստ այսմ ցանկանում էի իմ մի բավականին ընդարձակ աշխատությունը, եթե խմբագրությանդ հավաներ, տպագրության հանձնելու Այդ աշխատությունն է՝ «Ստուգաբանական բառարան հայ լեզվի արմատներու»⁴: Սույն աշխատության համար արդարև հայ առանձին կտակ հանձնված է էջմիածնա Ճեմարանին, ինչպես արդեն հայտնի պետք է լինի Ձեզ, ես այդ կտակին դիմած եմ, բայց դժբախտաբար անխորհուրդ կտակագիրը չի կարողացել կտակի մեջ յուր միտքը պարզ հայտնել և փախցրել է մի այսպիսի պայման. «2000 ռ. կտրվի այն հեղինակին՝ որ կկազմե և կտպե հայերեն լեզվով

հայերեն արմատական բառարան»։ Կտակակատարները հիմնվելով այս կտակ բառի վրա (և հասկանալով այդ բառը «տպած է, տպել է» իբր անցյալ ընդունելություն), պահանջում են որ իմ աշխատությունը ամբողջ տպագրելուց հետո ներկայանա կտակին։ Իսկ որովհետև ես այժմ չունիմ առատ միջոցներ աշխատությունը տպագրել տալու համար, դիմում եմ պատ. խմբագրությանը, որպեսզի եթե կարելի լինի համաձայնություն գոյացնել, հանձնվի տպագրության և այնուհետև ներկայացվի կտակին. այս մասին իմ խնդրած պայմանները հետևյալները կլինեն. — 1. Աշխատությունը կտպվի իմ հսկողության տակ, ինչպես 5-րդ պայմանն էլ համաձայն է. կամ եթե ոչ գոնե վերջին անգամ մի փորձ ես կսրբագրեմ։ 2. Առնվազն կտպվի 500 օրինակ։ 3. Տպելուց հետո աշխատությունը պետք է ներկայացվի կտակին և սրա որոշած 2000 ռ. վարձատրությունը մնում է միայն ինձ։ 4. Տպված օրինակներից իմ օգտին վաճառելիք օրինակների թիվը թողնում եմ բոլորովին Ձեր տնօրինությանը։ 5. Ոչ մի դրամական վարձատրություն չեմ պահանջում Ձեր կողմից։

Իմ կարծիքով ժողովածուի պայմանագիրը սրանց հակառակ չէ, եթե, օրինակ, աշխատությունը տպվի էջմիածնա տպարանում, թե ծախքը քիչ և թե իմ անմիջական հսկողությանս պատճառով տառասխալներից աղատ կլինի. տրպագրյալ օրինակները բոլոր կղրկվին խմբագրությանը և խմբագրությանը հաշվով կվաճառվին։

Ավելորդ չեմ համարեր նաև աշխատության էության մասին մի քանի խոսք անել այստեղ։ Աշխատությունը պարունակում է՝ 1. Հայերենի ամբողջ արմատները՝ այբբենական կարգով. յուրաքանչյուրի մոտ ը<ստ> տ<առի> սովորական բառի հոլովումը, նշանակությունը, գործածության ժամանակը, նրանցից ծագած ածանցները։ 2. Բառի գիտականորեն ընդունված մեկնությունը, ստուգաբանությունը, համապատասխան օտար ձևերը մանրամասնորեն և ընդարձակ։ 3. Սկզբից մինչև 1900 ինչ-որ մեկնություններ տրված են այդ բառի մասին. ուրիշ խոսքով, ստուգաբանությանց պատմություն, ո՞վ է եղել, որ առաջին անգամ տվել է գիտական և ճիշտ մեկնությունը։

4. Նույն արմատին գավառական ձևերը։

5. Թե արդյոք նույն բառը փոխ առնված է օտար լեզուների կողմից և ինչ ձևով։

Առաջին երկուքը, ինչպես հայտնի է, կա Հարշմանի⁵ աշխատության մեջ⁶, բայց մյուս երեքը իսկապես իմ աշխատության արդյունքն է. 3-րդ կետի մասին Lagard-ն⁷ ունի, բայց գոնե 4-րդը և 5-րդը դուրս իմ աշխատությունն է. կաղմած և հավաքած եմ արդեն 14 բարբառով բառարան⁸, այսպես՝ Պոլսո, Վանա, Մշո, Ասլանբեգի, Ղարաբաղի, Սուշավայի, Զեյթունի և այլն և այլն. որոնք բոլորը ես իմ ականջով լսելով միայն պատրաստած եմ։ Վերջինի մասին թեև իսկապես ոչ մի աշխատություն չկա, բայց ես իմ աշխատությամբ պատրաստել եմ արդեն 1000-ի չափ վրացերեն, 50—թուրքերեն, նմանապես Կովկասյան բաղմաթիվ լեզուներով, ինչպես և քրդերեն շատ փոխառյալ բառեր հայերենից։

Համեմայն դեպս աշխատությունը իհարկե պետք է ներկայանա նախ պատ. խմբագրությանը հավանության. հուսով եմ թե կընդունվի։

Մի բառ էլ աշխատության ընդարձակության մասին։ Աշխատությունն ունի մոտ 1500 էջ նամակիս մեծությամբ էջերով։ Միայն Ա տառը՝ որ գրաբնու-

թյան ուղարկելու համար մաքուր գրված և պատրաստ է, ունի 256 էջ, ինչ որ կազմում է աշխատության մեկ վեցերորդը:

Սպասելով մեծապատիվ խմբագրությանդ բարեհաճ պատասխանին՝

Կմնամ ամենախոնարհ հարգանքը

Հ. Հ. Աճառյան

16 մարտ 1900
էջմիածին

3

1900, հոկտ. 6 էջմիածին

Մեծահարգո պրոֆ.

պր. Գր. Խալաթյան,

Շտապում եմ պատասխանել մի առ մի Ձեր արած հարցումներին:

1. Ուղարկում եմ տպարանական ժողովի գրավոր պատասխանը, որի համեմատ մի թերթի ճախսը լինում է ընդամենը 123 ուրբի: Շարվածքը և տպագրությունը ջոկ ջոկ չեն ընդունում հաշվել: Իմ կողմից լինելիք աջակցությունը, կարծում եմ, կլինե՞ր հսկել աշխատության տպագրության վերա, փորձերի սրբագրությունը անել տալ, մի վերջին փորձ էլ ինքս անել, համենայն դեպս, մի միջնորդ հանդիսանալ տպարանի և ճեմարանիդ մեջտեղ: Իսկ թե ավելի ինչ է հարկավոր, խնդրում եմ հայտնել ինձ:

2. Հայ բարբառների բառարանը՝, ինչպես հայտնի է Ձեզ, երկու է. մին՝ նշանակել գրաբար որևիցե բառի գավառական ձևերը՝ հետևյալ ձևով. երկրորդ՝ հավաքել զանազան բարբառների մեջ գտնված և գրաբարում չեղած հայերեն բառերը: Կարծելով, թե Ձեր առաջարկելիք հարցը առաջին բառարանի մասին չէ, այլ երկրորդ բառարանի մասին, կանցնեմ պատասխանել այդ տեսակետից:

Նախ ևս հավատում եմ թե գավառական բառեր հավաքած անձեր շատ կան. հասկապես լսել եմ թե մի վանեցի ունի 10 000 գավառական բառ. Պոլսից Խաչիկ Ուլուրիկյան² լսել եմ թե ունի 500 բառ. կաթուղիկ մի վարդապետ Հաճյան³ աղգանունով՝ մի լավ հավաքածո և այլն և այլն: Երբ որ կտակակատարի կողմից առաջարկություն լինի, բավական է որ առաջարկությունը լսվի (որովհետև առաջարկությունը կարող է այլևայլ պատճառներով չհասնել Փոքր Ասիա կամ Հայաստանի խորքերում գտնված մի բառահավաքի ականջը), ամեն կողմից հավաքածուներ պետք է լցվին: Եթե դուք որոշեք մի գումար միայն մրցանակ, դժվար պիտի լինի Ձեզ որոշել թե այդ մրցանակը ում պետք է տալ: Որովհետև, եթե ամենից առաջ ուղարկողին վճարեք, հաջորդ աշխատությունները (այսինքն ավելի ուշ ուղարկողները), թեև ավելի արժանավոր էլ լինին, առանց վարձատրության պետք է մնան և չպետք է հրատարակվին: Իսկ եթե ասեք, որ ուղարկված բոլոր հավաքածուների միջից ամենից արժանավորին կվարձատրեք, այն ժամանակ պետք է որոշել, թե որն է արժանավորագույնը: Իմ կարծիքով, արժանավորագույն չկա, և բոլորն էլ հավասարապես արժանավոր են: Բացատրեմ: Ենթադրենք թե շորս հավաքածո ուղարկված է յուրաքանչյուրը 1000-ական բառով: Նախ չպետք է կարծենք թե այս հավաքածուներից շորսն էլ պարունակում են նույն բառերը, այլ յուրաքանչյուրը

կազմված լինելով ամենայն հավանականություններով տարբեր տարբեր գավառներում, պրտի պարունակեն տարբեր տարբեր բառեր՝ գոնե մեծ մասամբ։ Ուրեմն հասկանալի է թե յուրաքանչյուրը հավասարապես արժանի է մրցանակին և պետք է որ յուրաքանչյուրն էլ հրատարակվի։

Ենթագրենք այժմ էլ թե ուղարկված հավաքածուների բառերի գումարը տարբեր է. օր<ինակ> մին 1000, մյուսը 3000, մի ուրիշը 5000 և թեկուզ մյուսն էլ 10 000 բառ է պարունակում։ Էլի չպետք է համարել թե առաջինի 1000 բառերն էլ գտնվում են 10000-ի մեջ, կամ 5000-ի մեջ են. այլ սրանք էլ տարբեր տարբեր գավառներում կազմված լինելով տարբեր տարբեր բառեր են պարունակում՝ գոնե մեծ մասամբ։ Ուրեմն նմանապես բոլորն էլ արժանավոր են՝ այս անգամ թվի համեմատությամբ։

Մնում է ենթադրել, թե մի հավաքածուի մեջ գտնված բառերը բոլորն էլ գտնվում են մյուս հավաքածուի մեջ (այս երկրորդ հավաքածուն թող պարունակի նախորդից մի թիվ բառեր ավելի) այս պարագային դարձյալ չի կարելի առաջինը զրկել և երկրորդը վարձատրել. որովհետև նախ՝ որ առաջինի հեղինակն էլ մի օգտակար աշխատություն է կազմած. երկրորդ՝ որ դարձյալ տարբեր գավառի բառեր լինելով գիտնականին համար մեծ արժեք ունի իմանալը, թե այդ նույն բառերը մյուս գավառի մեջ էլ են գտնվում։

Այս բոլորից հետևում է թե ամեն մի հավաքածու պետք է վարձատրվի, յուրաքանչյուրը իր պարունակած գավառական հայերեն բառերի թվի համեմատությամբ։ (Դիտմամբ ստորագծված է գավառական հայերեն բառը, որովհետև շատ հավաքածուների մեջ իբր գավառական բառ են ներկայացնում այլևայլ թուրքերեն, քուրդերեն, թաթարերեն, պարսկերեն, մինչև իսկ հին պարբար հայերեն ձևեր)։ Ըստ իս, լավը, ամենից լավը, այն կլինի, որ առաջարկությունը լինի բառերի թվի համեմատությամբ. հետո հավաքված տետրակները հանձնվելու մի մասնագետ լեզվաբանի, որ այդ բոլորը միացնելով, հայեր մի միակ ամփոփ աշխատություն, որի աշխատակից հեղինակները համարվեն առանձին առանձին տետրակների կազմողները։ Ես ամենամեծ բարախությունը հանձն կառնեի այդ միացման կամ ամփոփման գործը կատարելը։

Ուզում եք որոշել թե՞ ընդհանուր, թե՞ համեմատական սխտեմով առաջարկվի։ Եվ հարցնում եք այս մասին իմ խոնարհ կարծիքը։

Եթե առաջարկությունը լինի իմ ասած ձևով (այսինքն՝ բառերի թվի համեմատությամբ) այն ժամանակ համեմատականը կամ ընդհանուրը որոշել հարկ չլինի։ Իսկ եթե իմ ասած ձևով չի առաջարկվում, այն ժամանակ իհարկե պետք է որոշել նաև ձևը։

Ձեր որոշելու համար ի նկատի պետք է ունենաք թե ինչու՞ համար են հավաքում գավառական բառերը։— Երեք օգուտ միայն կարող է ունենալ գավառական հավաքածուն. 1. Լեզվաբանական՝ որպեսզի դրանցով ուսումնասիրվին այլևայլ բարբառների մեջ գտնված ձայնարանական օրենքները. 2. Ազգագրական՝ որպեսզի դրանով գաղափար կազմենք գավառի քաղաքակրթական աստիճանին, ներքին կազմության և այլն և այլն մասին. 3. Դրական՝ որպեսզի այդ գավառական բառերը մտնեն մեր նոր լեզվին մեջ և այս նոր տարրով ավելի հարստանա ու ճոխանա մեր գրական բարբառը։

Թիվ 1 պարագան կպահանջե, որ յուրաքանչյուր բառ գրվի բոլորովին լեզվաբանական ճշտությամբ, ուստի եթե միևնույն «սապոնի մաշված կտոր»

բացատրությունը Պոլսո մեջ հուրուկ և վանի մեջ խրյուսկ ձեն ունի (կամ ուրիշ տեղեր ալ ուրիշ ձեներ), պետք է որ թե՛ հուրուկ, թե՛ խրյուսկ ձենը ջոկ-ջոկ իրենց այբուբենական կարգում ներկայանան բառարանին մեջ: Այսպես՝ խրյուսկ վն. տես հուրուկ Պլ. հուրուկ Պլ=խրյուսկ վն—սապոնի կտոր՝ և այլն: Իսկ եթե թիվ 2, բայց մանավանդ թիվ 3 պարագան նկատի առնենք, այն ժամանակ պետք է որ յուրաքանչյուր բառի գավառական բոլոր ձենը նկատի առնելով ուղղագույն ձևը հանվի, միայն այդ նշանակվի և նրա կողքին փակագծի մեջ գավառական ձենը: Այսպես վերի ձենի մեջ քննությունը երևան կհանե հուրուկ. հուրուկ ձենը. պոլսեցիք իրենց օրենքներով առաջին ձևից կաղմել են հուրուկ (հմտ. պտուղ=պլ. պոտուղ. բլուր—պլ. բուլուր և այլն և այլն) վանեցիք էլ երկրորդից շինել են խրյուսկ նույնպես իրանց օրենքներով (հ=խ, ու—յու, ց բաղաձայնի մոտ=ս): Ուրեմն բառը նշանակել պետք է հետևյալ կերպով՝

Հրուկ, հրուցք «սապոնի կտոր» (—հուրուկ Պլ., խրյուսկ վն.):

Կմնա ուրեմն քննել, թե լեզվաբանական տեսակետով կաղմել բառարանը, թե՛ աղագրական և գրական: Իմ կարծիքն այս է, թե լեզվաբանական տեսակետով չարժե կաղմել, այլ միայն աղագրական-գրական տեսակետով: Որովհետև նախ որ վերջի ձևով կաղմելով՝ լեզվաբանը դարձյալ իրան համար հարկավոր եղած բաները պիտի կարենա գտնել, քանի որ փակագծին մեջ նշանակված են: Երկրորդ՝ որ դրանցից լեզվաբանական օրենքներ հանելը ավելորդ է, քանի որ գրաբարի և գավառաբարբառին էլ հասարակաց բառերից (օր. հաց=խաց) ավելի ապահով կերպով կրնան նույն օրենքները հանվել: Երրորդ՝ հենց լեզվաբանական օրենքները հանելու համար էլ հարկավոր է, որ նախավոր ձևերը կաղմվին: Ժիշտ ինչպես որ գրական-աղագրական տեսակետին մեջ: Չորրորդ՝ աղգի մեծամասնությունը գրական տեսակետից պետք է նայի գործի վերա, բավական մի մասը աղագրական տեսակետից, իսկ 3—4 հոգի միայն լեզվաբանական տեսակետից:

Ուրեմն այս բոլորը ցույց կտան թե աշխատությունը կաղմելու է վերջի (և ոչ առաջին) ձևով:

Բայց այսպես անելու ժամանակը չէ. այս այն ժամանակ կլինի, երբ այլևայլ բարբառների մեջ գտնված գավառական բառերը բավականին կհավաքվին: Իսկ այս վերջին խոսքն էլ կպահանջե որ Քանանյանց առաջարկությունը թվի համեմատությամբ լինի:

Իսկ այս ինչպես կարելի է՞ր:

Ձեզ ուղարկվելիք բառերի (այլևայլ տետրակների մեջ գտնվածները միմյանց վերա գումարելով) համագումարը 30 000-ը անցնելու չէ: Եթե կարելի լիներ Քանանյանցի 600 ուրբին բարձրացնել 1000-ի (ինչ որ կարելի է անել սպասելով մի տարի էլ) այն ժամանակ 30 բառը արժեկով 1. ուրբի, 300 բառ ուղարկողը կստանար 10 ուրբի, 1000 բառ ուղարկողը՝ 33 ուրբի, 2000 բառ՝ 66 ուրբի և այլն և այլն: Իսկ ամեն մի հավաքիչ կարող էր իր աշխատությունը հետ ստանալ, ինչպես և մի խումբ օրինակ տպյալ վերջնական աշխատությունից:

3. Ձեր ուղարկած ձեռագիրը՝ լուծել և ուսումնասիրել բավական ժամանակ է պահանջում. ինչպես տեսար գրվածքը բարոյական խրատների հավաքածու է, գրված Այտընյանի⁵ Հյուսիսային խմբի բարբառով (Լեհաստան—Ավստրիա—Հունգարիա—Ռումինիա)⁶, իմ կարծիքով Ռումանահայոց բարբա-

ռով: Մանրամասն քննությամբ կարելի է դեռ իմանալ: Եթե մինչև հունվար-փետրվար ժամանակ տրվի, կարող եմ մի առանձին ուսումնասիրություն կազմել նույն աշխատության վերա՝ գրչագրական, ուղղագրական, բարբառախոսական տեսակետից: Իսկ բանասիրականը, ինչպես գիտեք, իմ գործը չէ:

4. Գերմաներեն նշանակություններն էլ կարելի է ավելացնել իմ աշխատության մեջ, բայց այդ երեւի սրբագրության փորձի ժամանակ:

5. Հայկունու⁷ նամակը հանձնված է: Միաբանը⁸ առանձին նամակ արդեն գրել է Ձեզ: Կանայանցին⁹ և Մանանդյանին¹⁰ հաղորդեցի Ձեր ասածը:

Ընդունեցեք անկեղծ հարգանքներս
Ձերդ՝ Շր. Աճառյան

2. Դ. թուրքերեն բառերի առաջաբանը¹¹ պատրաստ է. այսօր-վաղը կուղարկեմ. խնդրեմ եթե ստանաք, հաճեցեք երկտողով մը հայտնել:

<նույնը>

4

Մեծարգո Ուսուցչապետ

պր. Գր. Խալարյան,

Շնորհակալությամբ ստացա Ձեր Մեծապատվության նամակը: Ձեր ասածների վրա հիմնվելով շատ հարմար է Ձեր առաջարկած հարցը՝ գավառական բառարանի առթիվ. «կազմել բառարան գրաբարում չպահպանված գավառական հայերեն բառերի, որոշելով նոցա նշանակությունը որեւէ եվրոպական լեզվով»: Սակայն ցանկալի չէ՞ր արդյոք սորա վրա ավելացնել հետեւյալը. «Յանկալի էր նաև որ յուրաքանչյուր բառի մոտ նշանակված լինեթ թե որ գավառներում գործածական է»: Այսպիսով մի օր հետքեր պիտի ունենանք գաղթականությանց խումբերը որոշելու և անոնց անցած ճամբաները երևան հանելու, ինչպես փորձվեցավ գնշունեռու և հունդարացիներու համար:

Փափագ հայտնած եք նաև, որ եթե միջոց ունիմ ես սկսեմ կազմել գավառական հիշյալ բառարանը: Այդպիսի մի աշխատություն ես արդեն վաղուց սկսել եմ և մի հաստափոր տետրակի մեջ ամփոփել եմ այժմ հրատարակված գավառական բառերը: Սակայն իմ հավաքումը դեռ ամբողջացած չէ. սրանից ջոկ եվրոպական լեզվով նշանակված չեն բառերի նշանակությունները. ունիմ նաև նույն բառերի ստուգաբանությունները, որչափ որ կարելի եղել է ինձ գտնել: Սակայն այս աշխատությունը բոլորովին լրացնելու, այսինքն մնացյալ բառերն էլ հավաքելու, մի եվրոպական թարգմանություն էլ կցելու և Ձեր ուղած գիտական ձևին վերածելու համար՝ հարկավոր է դեռ մի քանի ամսվա աշխատություն: Այս ձևեռ էլ զբաղված լինելով իմ հայ արմատների բառարանով, անկարելի է ինձ սկսել գավառական բառարանին: Ինձ համար էլ շատ ցանկալի էր օգտվել նույն մրցանակից¹, ինչ որ նյութականի կողմից ինձ մի ձեռնավություն պիտի լիներ, սակայն հանգամանքները հարմար չեն: Կարելիություն չկա՞ արդյոք, որ նույն մրցանակի առաջարկությունը մնար հաջորդ տարվան. այն ժամանակ ես բոլորովին պատրաստ էի Ձեր փափագը լիովին լրացնելու: Եթե կա այդպիսի կարելություն, ես այժմվանից կարող եմ սկսել թղթակցել կամ աշխատել թղթակցել այն անձերի հետ, որոնք գավառական

բառերի հավաքածուներ ունեն կազմած: (Փակագծի մեջ հայտնում եմ ցավ ի սիրտ, թե այն վանեցին, որի համար լսել էի թե ահագին թվով գավառական բառեր է հավաքել, մի վարդապետ է, որը բանտարկվելով՝ բանտի մեջ իր ընկերներից հավաքել է 25 000 բառ. նրա կազմած տետրակը ոստիկանությունը աւրել է, վարդապետի վախճանելուց հետո բանտի մեջ):

Տպարանական նախահաշվի մեջ սխալմամբ ուրիշ կերպով է նշանակվել հաշիվը. «5/55—105 ո.»», նշանակում է թե Հայկունու Բագրեանտի՝ թղթից երեսուն թերթը, երեք հարյուր օրինակ արժում է 105 ո., ուրիշ խոսքով Հայկունու Բագրեանտի թղթից մի քեւքը, երեք հարյուր օրինակ, թուղթը արժում է 3 ո 50 կ (երեք ուրբի և հիսուն կոպեկ):

... Ձեր նամակը արդեն ես ուղարկել էի պր. Հայկունուն. հետո նա խիստ ծանր հիվանդացավ տիֆով. այժմ ապաքինվում է:

Կարծում եմ թե ստացած եք արդեն թուրքերեն բառերի առաջաբանը³. ցանկալի էր ինձ իմանալ թե սկսվա՞ծ է արդյոք տպագրություն. Ձեր առաջարկած թարգմանությունները եվրոպական լեզվով ե՞րբ պետք է ավելացնեմ, ձեռագրի՞ մեջ, թե տպագրի վերա: Ձեռագիրը ուղարկելուց հետո, գտել եմ նաև քսանի չափ իտալերեն բառեր Պոլսո հայոց ժողովրդական լեզվին մեջ գործածական. կարծում էի, թե եթե մի անգամ ինձ հաճեիք ուղարկել տպագրական փորձերը, թե ավելի հարմար կլինեի և թե կարող կլինեի ես նույն հավելվածները հարկավոր տեղերում ներմուծելու:

Հաճեցեք ընդունել խնդրեմ իմ ամենախորին հարգանքներս.

Ձերդ՝ Հ. Աճառյան

էմիածին
1900 Նոյ. 24.

5

4 Նոյեմբեր 1903
Շուշի

Մեծարգո Ուսուցչապետ,

պր. Դր. Խալաթյան,

ի Մոսկվա

Ամիսներ առաջ գրած էի առ Ձերդ Մեծապատվության իմ արմատական բառարանիս տպագրության առթիվ, բայց արուհետև դայժմ պատասխան չեմ ստացած, ուստի ապահով եմ թե Ձեր ամառային բացակայության ժամանակ նամակս կորսված է: Հետևաբար կուղեմ հոս երկտողիս մեջ կրկնել նույնին պարունակությունը:

Բառարանիս առթիվ Ձեր գրած թուղթի պատճենն ստացած եմ ճեմարանի պատ. վարչութենեն. պր. Կոստանյան¹ գրած էր թե աշխատությունը արժանի է մրցանակին, եթե տպագրության հանձնվի, կրնամ որոշված գումարն ստանալ: Այս առթիվ փափագեցա դիմել Ձեզ և Ձեր միջոցով Ազգ. ժողովածուիդ խմբագրության, հարցնելու համար, թե արդյոք խմբագրությունդ հանձն կառնե՞ր տպագրությունը սույն գործին: Իմ կողմես ես կխոստանայի ամեն դյուրություն ընծայել Ձեզ, մինչև իսկ որոշված գումարեն մաս մը նվիրել ծախուց համար, տպվելն վերջ աշխատությունը կլինի ընկերությանդ սեփականությունը, միայն ինձ կտրվի մի քանի օրինակներ: Քաղաքս կան երկու միջակ տպա-

րաններ, որոնք իհարկին կրնան օգտակար հանդիսանալ։— Հուսալով թե կհաճիր Երկրորդով մը պատասխանել ի մոտո իմ խնդրիս առթիվ Ձեր որոշման մասին։ Մնամ խոնարհ հարգանքը,

խ. ծ. Հր. Աճառյան

6

Մեծապատիվ Ուսուցչապետ

պր. Գր. Խալաթյան,

Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ թե էջմիածնի ճեմարանավարտ և այստեղ մեր դպրանոցում ուսուցիչ մի պարոն, կազմած լինելով Ս. Լուսավորչի վարրը, ցանկանում էր ուղարկել Ձեզ, որի քննությունը հանձն եք առած ըստ հայտարարության հայ թերթերի։ Ձուզենալով որոշապես դնել յուր անունը, մերժման դեպքում անպատվություն չլինելու համար, իմ խորհրդով, ըստ եվրոպական սովորության, անվանեց իրան «Շուշեցի» ծածկանունով և աշխատությունը հանձնեց ինձ, որ և պատիվ ունիմ Ձեզ ուղարկելու ի քննություն։ Եթե հարմար դատեք որոշված մրցանակին, բարեհաճեցեք խնդրեմ հայտնել նվաստիս, և ես պարոնի անունն ու հասցեն կհայտնեմ Ձեր Մեծապատվության։

Երկրորդ՝ մի այլ պարոն, ծերունի Ավետիք Բահաթյանց՝, հայտնի մանկավարժի՝ Եղբայրը, կազմել էր Ղարաբաղի բառերի բառարան, շատ անկանոն կերպով. ծանոթանալով այդ պարոնի հետ, և գրավիելով աշխատության մեծությունից, բառերի ճոխ բանակությունից, բառերի հատուկ կարևորությունից, ձևնարկեցի առաջնորդ լինել պարոնին, և ամբողջ 600 մեծապիր երեսներից բաղկացած աշխատությունը հանձն առի կանոնավորել, ավելորդ՝ արդեն զրաբարից հայտնի հայերեն, ինչպես և թուրքերեն և այլ բառերը դուրս վտարել և կազմել նոր մի աշխատություն, որ ունի 200 միջակ երես։ Աշխատությունը տպագրելու համար պարոնը շունենալով այժմ կարողություն, մյուս կողմից ինքս հատուկ ցանկանալով, որ ըստ կարելույն շուտ հրատարակվի սույն հում նյութը, պարտք համարեցի դիմել Ձեզ և խնդրել թե արդյոք կարելի՞ էր էմինյան ազգագրական ֆոնտի հաշվով տպագրել տալ։ Հաստատ կարող եմ ասել թե ամեն պայման կարելի է Ձեզանից կախված համարել, և Ձեր ամեն մի տնօրինությունը նա պատրաստ է ընդունելու։

Երրորդ՝ Ձեր կողմից առաջարկված Ս. Մեսրոպի ընդարձակ կենսագրության և հայ այբուբենի գյուտի պատմության մասին՝ սկսել եմ աշխատել նվաստս, որ և ժամանակին կուղարկեմ ի քննություն։ Փափագելի էր ինձ իմանալ թե արդյոք կայի՞ն ուրիշները, որ այս մասին որևիցե բան պատրաստեին։

Չորրորդ՝ Ձեր առաջարկության համեմատ իմ Արմատական բառարանի տպագրության համար երկար մտածելուց հետո՝ այլ ելք չունենալով՝ որոշեցի դիմել Պետերբուրգի հայոց ևկեղեցու վարչության։ Կարո՞ղ եմ խնդրել Ձեզ արդյոք, որ բարեհաճեք դուր ևս մի երկրորդ ուղարկել նույն վարչության՝ հայտնելու համար թե դուր քննած եք նույն աշխատությունը, և հարմար դատված տպագրության։

Նախապես ներողություն խնդրելով իմ տված ձանձրությանց, խնդրեմ հաճեցեք ընդունել խորին մեծարանցա հավաստիքը։

Մնամ հարգանքը՝

Հ. Հ. Աճառյան

Մարտ 2 1904, Շուշի

Մեծապատիվ Տեր Ուսուցչապետ

պր. Գր. Խալաթյան,

ի Մոսկվա

Մեծավ շնորհակալությամբ ստացա Ձեր թուղթն, որու պարունակությունը առավել ևս ուրախացուց զիս, մանավանդ նյութական այս դառն հանգամանքներու մեջ։ Մրցանակաբաշխության այս նպաստավոր ելքը՝ կախված էր անշուշտ միայն Ձեր բարեհայեցողությունեն, և այս պատճառով խորապես շնորհակալ եմ Ձեզմե։

Ս. Մեսրոպի- Հրատարակության ուրախությամբ կհամաձայնեմ և կանխապես կհայտնեմ իմ շնորհակալիքը. միայն թե անշուշտ ինձ համար դառն կլինեն այս կրճատումները, որոնց մասին կականարկե Ձեր Մեծապատվութիւնը։ Բայց անշուշտ ամեն բանի առաջ հարկավոր է գիտնալ թե ինչ են այդ կրճատումները, և թե անոնք յուրաքանչյուր գլխու մարմնոյն մեջ չեն, եթե ամբողջ կամ նույնիսկ Ա հատորը (քննության աղբյուրներու) ամբողջ, այս պարագային կրնայի համաձայնել, այն պայմանով, որ այդ կրճատումները ուրիշ առթիւ կամ ուրիշ անձի մը կողմէ կամ իմ հաշվով տպւիլն և կցւիլն մնացւալին։

Ձեր Մեծապատվութեան կողմէ ինձ ուղարկված հին ձեռագիրը³ ժամանակին արդեն ուսումնասիրած և փոքր աշխատություն մը կաղմած էի. այս մասին քանիցս պատիւ ունեցա գրելու Ձեզ, բայց անպատասխանի մնացի. եթե այժմ տրամադրություն կա վարչության կողմէ հրատարակելու նույն գրվածքը, կրնամ անգամ մը աչքէ անցնել հետո, իսկույն ուղարկել Ձեզ։

Էմիլյան ժողովածուի համար հարմար քանի մը աշխատություններ ևս ունեմ, կամ արդեն պատրաստ, կամ պատրաստ համարելու մոտ։ Եթե վարչությունդ պատշաճ կհամարե հրատարակության, մեծավ ուրախությամբ կըրնամ ղանոնք ևս ուղարկել Ձեզ։ Ահա անոնց ցանկը.

1. Ռուսերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ (նույն ծրագրով ինչպես Թուրքերենն փոխառյալ բառերը)⁴։

2. Եվրոպական փոխառյալ բառեր ժողովրդական լեզվին մեջ (նույնպես)⁵։

3. Քննություն 4. Պոլսո բարբառին (մանրամասն)⁶։

4. Քննություն Սուլավայի բարբառին⁷, որ Բաղմավեպի մեջ սկսավ տպւիլ. բայց կիսատ մնաց բոլորովին։

5. Քննություն Խարբերտի բարբառին⁸։

Որոշված մրցանակը տեղ հասցնելու համար կխնդրեի որ բարեհաճելիք միայն շորս հարյուր ռուբլին փոխագրել Շուշի քաղաքը, պարոն Նիկոլայ Խաչյանցի հասցեին, վճարելու համար իրեն անեցած բարդ տոկոսավոր պարտիւս։ Ես արդեն հաղորդած եմ իրեն։ Իսկ մնացյալ հարյուր հիսուն ռուբլին նեղություն կրեցեք առ այժմ պահելու։

Ս. Մեսրոպի տպագրության համար այս կետն ևս պարտ եմ հիշել, թե այս պարագայից մեջ ինչպես կրնամ անձամբ հսկել Խիֆլիսի կամ Էջմիածնի մեջ, երբ ևս այստեղ եմ պաշտոնով։ Բավրիդի մեջ ևս կա տպարան, որ կրնա ավելի աժան հրապարակել գործը. և ևս ավելի լավ կրնամ հսկել։ Եթե հաջողի,

որ մյուս տարին էջմիածին կամ այլուր պաշտոնի լինեմ, այդ անշուշտ ավելի լավ:

Մատուցանելով իմ խոնարհ հարգանքները

Մնամ Մեծապատվությանդ

խ. ծ.

Հ. Հ. Աճառյան

Դավրեժ, 1905 մարտ 23:

8

Մեծապատիվ Տեր Ոստոցչապետ

պր. Գր. Խալաթյան՝,

Թափրիդից հեռանալով հաստատված եմ այժմ Նոր-Բայազետի մեջ: Ս. էջմիածնում դումարված համաժողովի² առթիվ Ս. էջմիածին երթալով՝ առիթ ունեցա տեսնելու Պր. Հայկունուն, որ հայտնեց թե Ձեր Մեծապատվությունը գրած է իրեն և առաջարկած կազմել մինչև այժմ հրատարակած հատորների³ համար բառարան: Պր. Հայկունին արդեն բավական ծերացած և ասորուստ հայթայթելու համար նյութական պարապմունքներով զբաղված լինելով՝ խընդ-րեց որ ես վերցնեմ այդ աշխատանքը:

Ես հայտնեցի թե ինքս արդեն կազմում եմ գավառական բնդարձակ բառարան⁴, ուր պարունակված բառերի թիվը այժմ արդեն հասել է 26 000-ի և որովհետև իմ ծրագիրը շատ լայն է և պետք է պարունակե նաև մինչև այժմ հրատարակված, մինչև այժմ ումանց դեռ չհրատարակված ձեռագիր աշխատությունները, հետևաբար պետք է պարունակե նաև Հայկունու հատորների բոլոր գավառական բառերը: Այս պատճառով նորից այդ հատորների համար կազմել գավառական բառարան՝ ես ավելորդ եմ համարում. իսկ հատորիս հրատարակութունից հետո նույնիսկ ավելորդ կհամարեմ ամեն մի գավառական բառարան, բառգրքույկ կամ թերթ, եթե իմ գավառական բառադանից դուրս բառեր չի պարունակել:

Աշխատությունս⁵ արդեն մեծագույն մասամբ պատրաստ է և եթե մի տարի էլ առանձնապես զբաղվիմ նրանով՝ կատարյալ կլինի, ավելացրի նաև թե եթե էմին. Ազգ. խմբագրությունը պատշաճ դատե, կարող է հայտարարել աշխատությանս պատրաստության մասին և հայտնել թե նույն հատորների բովանդակած բառերի համար կարելի է դիմել հիշյալ բառարանին:

Սակայն պր. Հայկունին ունի և մի այլ բառարան⁶ արդեն պատրաստ, ուր հավաքել է դանազան ժամանակ դանազան գավառական բառեր. այս աշխատության վրա ես մի քանի տարի առաջ արդեն աշխատել եմ և թուրքերեն բառերը՝ որ նա հայերեն էր կարծում, հանել բառարանից. բայց ամբողջ չեմ կարողացել աչքից անց կացնել. պարունակում է մոտ 6000 բառ և շատ ցանկալի է որ շուտով հրատարակվի:

Պր. Հայկունին հավանեց իմ ասածին և հանձն առավ մինչև իսկ օգնել ինձ իմ բառարանի պատրաստության համար: Այժմ նա խնդրում էր ինձից դիմել Ձեր բարեհաճության և այս ձևով ազատել իրան սույն ծանր և դժվար աշխատության սկսելուց: Նա մեծ հույս ունի, ինչպես և ես, Ձեր համաձայնության վրա:

Քանանյան մրցանակի⁷ համար՝ գաղթականության պատմության⁸ վրա աշխատում եմ բավական ժամանակն ի վեր. հավաքել եմ անհամար նյութ և հույս ունիմ, որ մի հաղարանոց էջով հատոր կարող կլինեմ ներկայացնել որոշված ժամանակ՝ հիշյալ մրցանակին մասնակցելու համար:

Ս. Մեսրոպի հրատարակության առթիվ, եթե չեք փոխած Ձեր մտադրությունը, գուցե այժմ իբրև ավելի մոտիկ Ս. էջմիածին, կարելի լինի ձեռնարկել այդ հրատարակության:

Նամակիս հետ ընդունեցեք խորին հարգանացս հավաստիքը:

Խ. Ժ.

Հ. Հ. Անառյան

<1906 սեպտեմբեր>

Ի եր հասցես՝ Ново-Баязет

9

Մեծապատիվ Ուսուցչապետ,

պրոֆ. պր. Դր. Խալաթյան,

Խալաթյանի¹ և թե՛ Չիթունու² աշխատությանց տպագրության համար այսպիսի նյութերով է որ հայագիտության պիտի առաջանա: Մեծ է նաև լեզվաբանի օգուտը, որովհետև այդ նյութերը ամենից առաջ մեզ տալիս են լեզու: Չիթունու գործի³ համար՝ կասկածում եմ որ պատրիարքարանը հանձն առնե ուղարկել Ձեզ, որովհետև Իդմիրյան⁴ մրցանակի օրենքով Ձեռագրերը ետ չեն դարձնում:

Բարբառագիտությանը⁵ շատ արագ է գնում. օրական համարյա 6—7 էջ շարվում է. ես սխալվել եմ հաշվի մեջ. ոչ թե 50 էջ, այլ մոտ 50 թերթ (իմ տետրակից) մնացել էր դեռ. այժմ միայն կարող եմ ասել որ էլի կա 3 տպագրական թերթ, որ շուտ կվերջանա: Պր. Ավագյանը⁶ ունի նաև շապիկի համար հարկավոր տառերը և թուղթը: Նա որոշել է այսպես մինչև մայիսի 25 ամեն ինչ կվերջացնե և դանդաղ գնացքով երկաթուղու վարչության կհանձնե ձեռարանի հասցեին:

Մեկ օրինակ գիրք և երկաթուղու վարչության թուղթը ապահովյալ ծրարով կուղարկե Ձեզ փոստով. և կխնդրե որ իսկույն ևեթ ուղարկվի վճարը, ինչպես որ պայման էր դրված, առանց հապաղելու մինչև սեպտեմբեր. որովհետև ինքը մեծ դրամագլուխ չունի և հաղիվ է տանում գործը:

Գալով քարտեզին⁷. ես մի շաբաթվա մեջ կնկարեմ և կուղարկեմ, բայց չէ՞ որ պետք է այդտեղ դեռ փորագրել տաք. այդ անշուշտ մի երկու շաբաթ կբաշե: Ուստի կարծեմ կարելի է այսպես անել. գրքերը մայիսի վերջին կստանաք. բայց քարտեզը այնուհետև կտպվի և այդտեղ գրքի մեջ դնելով՝ սեպտեմբերին հրապարակ կհանվի: Ուրիշ ձև անհարմար է. որովհետև իմ նախիջևան վերադարձս կասկածելի է. աշխատում եմ գործ գտնել Թիֆլիսում:

Մեյեի քննադատականը գտնվում է Journal Asiatique de Paris, 1909, էջ 558—560, Karst-ինը կարծեմ կորցրել եմ, այժմ չեմ գտնում. կես երես բան է: Իոցա խմբագրականի մեջ դետեյլեր ավելի պատշաճավոր է: Կարելի է հիշել նաև թե ֆրանսերեն իբրև թեզ ներկայացված է Ecole Pral des Hautes Etudes* և ընդունելով համալսարանի վարչության կողմից՝ մտցրած է մա-

* Բարձրագույն ուսուցման դպրոց:

տենագարանի շարքը. հայերենը հոսողատիկ ընդարձակ է. մանավանդ որ իմ նոր ճանապարհորդությունս 1910-ին շատ բան փոխած և պակասները լրացած է ինչ <սկս> Սեբաստիայի, Խարբերդի, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Ռոստոթոյի, Զեյթունի բարբառների մասին:

Գրքի վերնագիրը պետք է դնենք՝ Армянская диалектология (очерк и классификация арм. наречий)⁸ Հայ բարբառագիտություն (ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների): Ուրվագիծ բառը անհրաժեշտ է Մեյեի խորհրդով, բրպեսդի ֆրանսերեն գրքիս հրատարակիչը իրավունք չունենա գրքիս վրա պահանջներ անելու՝ իբրև թարգմանության:

Այս բոլորի մասին սպասում եմ Ձեր հրամանին. խնդրում եմ փութով հայտնեցեք Ձեր համաձայնությունը և ուղարկեցեք կլիշեն, իսկույն ևեթ կտրպենք. մնում է միայն 12 օր:

Այս ամառը անց կացնելու ենք Շուշում. կնոջս հայրենիքն է. երեք տարի է կարոտ ենք:

Բյուզանտիոն գրատնից⁹ շտապով պահանջել էին գիրքը. ուստի ուղղակի գրեցի Ձեզ, որ շուտ լինի: Այժմ ես հասցեն էլ չունեմ գրելու համար:

Նախիջևանից մտադիր եմ մեկնել հունիսի 1-ին: Ցանկանում եմ Ձեզ ամենայն հաջողություն՝ Ձեր ամառային ճամբորդության ժամանակ:

Խոնարհ հարգանք

Հ. Աճառյան

ՄԱՆՈՒԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. «Էմինյան ազգագրական ժողովածու» մատենաշարը նվիրված էր անվանի հայագետ Մկրտիչ Էմինի (1815—1890) հիշատակին: Այն հրատարակվում էր նրա կտակած միջոցներով: Ոկտեմիեր Էմինը հրատարակվել 1901 թ., Գրիգոր Խալաթյանի խմբագրությամբ:

2. Տե՛ս Հ. Աճառյան, Թուրքերենն փոխառյալ բառերը հայերենի մեջ (Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Դ), Մոսկվա—Վաղարշապատ, 1902:

2

1. Նկատի ունի Գր. Խալաթյանի «Ա և Բ Մնացորդաց գրքերի նորագյուտ թարգմանություն» (Վաղարշապատ, 1896) գրքերը:

2. Խոսքը Հ. Աճառյանի «Թուրքերենն փոխառյալ բառերը հայերենի մեջ» գրքի մասին է:

3. «Ժողովածուին» աշխատակցելու պայմանների վերաբերյալ ժամանակին առանձին ղըրքույկով լույս է տեսել «Կանոններ» Մեր որոնումները՝ գտնելու այդ կանոնները ապարդյուն անցան:

4. Նկատի ունի Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» (ապակետիպ, յոթ հատորով), Երևան, պետական համալսարան, 1926—1935:

5. Հյուբշման Հենրիկոս (1848—1909)—Գերմանացի անվանի արևելագետ:

6. Նկատի ունի՝ H. Hübschman, Armenische grammatik (Leipzig, 1896) գիրքը:

7. Նկատի ունի՝ Պրլ Անտուան Լազարը (1827—1891)—Գերմանացի խոշոր արևելագետ-հայագետ, Գյոտինգենի համալսարանի արևելյան լեզուների պրոֆեսոր: Ունի մի քանի տասնյակ մենագրություններ, նվիրված արևելքի ժողովուրդների պատմության, լեզվի, կուլտուրայի, կրոնի ուսումնասիրությանը: Լազարի հայագիտական աշխատություններից են. „Überschicht über die im Aramaischen, Arabischen und Hebräischen Übliche Bildung der nomina“ (Göttingen, 1889), „Agatangelus und die Akten Grigors von Armenien“ (Göttingen, 1887), „Armenische Studien“ (Leipzig, 1877):

8. Խոսքը վերաբերում է Հ. Աճառյանի «Գավառական բառարանին» (Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Թ), Թիֆլիս, 1913:

3

1. Նկատի ունի Հ. Աճառյանի «Գավառական բառարանը»:

2. Խաչիկ Ուզուրեկյան—բանասեր-բանահավաք, մասնակցել է Իզմիրյանց մրցանակաբաշխությանը: Ակնարկված ձեռագիրը չի տպագրվել:

3. Հակոբ վարդապետ Հաճյան—բանասեր-բանահավաք, գրող, հեղինակ «Հեղինե կամ դադտնիք մը» (Կ. Պոլիս, 1860) և այլ գրքերի: Ակնարկված ձեռագիրը չի տպագրվել:

4. Նամակում հիշված ձեռագրի ինչ լինելը մեզ չհաջողվեց պարզել:

5. Այսրենյան Արսեն (1825—1902)—Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ, լեզվաբան: Ուսումնասիրել է հատկապես հայերեն աշխարհաբար լեզուն: Գրել է «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» (Վիեննա, 1866), «Քերականություն Հայկազյան լեզվի ի պետս առաջագեմ աշակերտաց» (Վիեննա, 1885) գործերը: Աշխատակցել է «Եվրոպա» և «Հանդես ամսօրյա» պարբերականներին:

6. Նկատի ունի Այսրենյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» (Վիեննա, 1866) գիրքը:

7. Հայկունի Սարգիս (1838—1908)—բանահավաք, ազգագրագետ: Նրա գրի առած ժողովրդական բանահյուսության հարուստ նյութերը տպագրվել են «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ, Դ, Ե, Զ հատորներում: Գրել է նաև «Բագրևանդ» (Էջմիածին, 1894) և ուրիշ գրքեր:

8. Միաբան—Տեր-Մկրտչյան Գալուստ (1829—1918), անվանի հայագետ, ուսանել է Փարիզում, ապա Մյունխենում: Խմբագրել է «Արարատ» ամսագիրը: Ունի բազմաթիվ հայագիտական մեծածառք աշխատություններ. «Անանիա Շիրակացի», «Հայկականք», «Խորենացու պատմության ուսումնասիրություն», «Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայերեն թարգմանության ժամանակը» և այլն:

9. Կանայանց Ստեփան (1860—1937)— բանասեր, մանկավարժ։ Պաշտոնավարել է Գեղորգյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում, Շուշվա թեմական դպրոցում, խմբագրել է «Համբավարներ» շաբաթաթերթը։ Խոփետական տարիներին եղել է գիտության և արվեստի ինստիտուտի գիտական քարտուղարը։ Գրել է՝ «Մամիկոնյանց պատմությունը» (Վաղարշապատ, 1906), «Ջոջանց տան պատմականը» (Վաղարշապատ, 1907), «Անհայտ գավառներ հին Հայաստանի» (Վաղարշապատ, 1914) և այլն։

10. Մանանդյան Հակոբ (1873—1952)—անվանի պատմաբան։ Ուսանել է Վիեննայում, Պետերբուրգում, Դորպատում։ Երևանի համալսարանի առաջին ռեկտորը։ ՍՍՀՄ և Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։ Ունի բազմաթիվ հայագիտական կարևոր աշխատություններ հայերեն և ռուսերեն լեզուներով։ «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի», «Հունարան դպրոցը», «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», «Տիգրան Բ և Հռոմը», «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» (հատ. Ա, Բ, Գ) և այլն։

11. Հիշյալ «Առաջաբանը» զետեղված է Հ. Աճառյանի «Թուրքերեն փոխառյալ բառերը հայերենի մեջ» աշխատության սկզբում՝ էջ 1—20։

4

1. Խոսքը էմինյան մրցանակի մասին է։

2. Ակնարկում է Ս. Հայկունու համանուն (սեպտեմբեր) աշխատությունը (1894, Վաղարշապատ)։

3 Տե՛ս 3-րդ նամակի № 11 ծանոթագրությունը։

5

1. Կոստանյան Կարապետ (1853—1920)— հայագետ, մանկավարժ։ Ավարտել է Պետերբուրգի համալսարանը։ Պաշտոնավարել է Գեղորգյան և Լազարյան ճեմարաններում, Ներսիսյան դպրոցում՝ որպես տեսուչ և ուսուցիչ։ Թողել է բազմաթիվ հայագիտական հետազոտություններ՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», «Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում», «Նոր ժողովածու—միջնադարյան հայոց տաղեր ու ոտանավորներ» պրակ Ա—Դ և այլն։

6

1. Ավետիք Բահաթրյանց—բանասեր-բանահավաք։ Գրել է «Առակագիրք» (Շուշի, 1886), «Հին հայոց տաղաչափական արվեստը» (Շուշի, 1891) և այլն։ Ակնարկված ձեռագիրը լույս չի տեսել։

2. Նկատի ունի հայտնի մանկավարժ Առաքել Բահաթրյանցին (1848—1883)։ Հրատարակել է դասագրքեր և բազմաթիվ մանկավարժական հոդվածներ։

3. Խոսքը Հ. Աճառյանի «Ս. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրները և անոնց քննությունը» (Փարիզ, 1907) գրքի մասին է։

7

1. Խոսքը վերը հիշված գրքի ձեռագրի համար էմինյան մրցանակ ստանալու մասին է։

2. Տե՛ս նախորդ նամակի № 3 ծանոթագրությունը։

3. Հին ձեռագիրը անհայտ է միզ։

4. Նման աշխատանք լույս չի տեսել։

5. Տե՛ս Հ. Աճառյան, Եվրոպական փոխառյալ բառերը հայերենի մեջ, Վիեննա, 1951։

6. Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի («Գիտական աշխ., Երևանի պետ. համալսարանի», Երևան, 1941, հատ XXI, էջ 19—250)։

7. Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Սուլավայի բարբառին («Բազմավեպ», 1899, № 1, էջ 112—114, № 4, էջ 218—220, № 7, էջ 325—327, № 11, էջ 516—519, № 12, էջ 557—560)։

8. Հ. Աճառյանի «Քննություն հարբերդի բարբառին» վերնագրով աշխատությունը լույս չի տեսել։

8

1. Թվականը վերականգնված է ըստ նամակագրի կենսագրության և նամակի բովանդակության։

2. Խոսքը ուսուցչական ժողովի մասին է։

3. Խոսքը Սարգիս Հայկունու «էմինյան ազգագրական ժողովածուի» հատորներում լույս տեսած գործերի մասին է։

4. Տե՛ս 2. Աճառյան. Հայերեն զավառական բառարան (Թիֆլիս, 1913):
5. Խոսքը վերը նշված բառարանի մասին է:
6. Նման աշխատություն լույս չի տեսել:
7. «Քանանյան մրցանակը» սահմանվել է Հաղարյան ճեմարանի խորհրդի կողմից, պետական խորհրդական, հանգուցյալ Դանիել Գաբրիելի Քանանյանի կտակի համապատասխան: Մրցանակը տրվում էր հայագիտական աշխատությունների համար: Ներկայացված գործերը կարող էին լինել՝ հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն լեզուներով:
8. Աճառյանի այս աշխատանքը մնացել է անտիպ, պահվում է հեղինակի արխիվում:

9

1. Խտլյան—ազգագիր, բանահավաք: Ակնարկված ձեռագիրը չի տպագրվել:
2. Զիթունի Տիգրան—գրող, բանասեր-բանահավաք: Հեղինակն է «Մայրենի աշխարհ, դրվագներ հայ ընտանեկան կյանքեն» (Կ. Պոլիս, 1913), «Սասունական. Սասմանց տուն» (Փարիզ, 1942) և այլ գործերի:
3. Խոսքը, հավանաբար, վերաբերում է Զիթունու «Մայրենի աշխարհ» աշխատության ձեռագրին:
4. «Իզմիրյանց մրցանակ»—տրվում էր Հովսեփ Իզմիրյանցի կտակի միջոցներով: Այն միևնույն ժամանակ կոչվում էր նաև Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխություն, որը հատկացվում էր լեզվաբանական, պատմական, բանասիրական կարևոր աշխատանքների համար: Սահմանվել է 1886 թ., Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի որոշմամբ: Տրվում էր տարին մեկ անգամ Ս. Թարգմանչաց տոնի օրը:
5. Տե՛ս 9-րդ նամակի N 4 ծանոթագրությունը:
6. Ավագյան—նոր նախնիների հայկական տպարանի տնօրենը:
7. Քարտեզը տեղավորված է 2. Աճառյանի «Բարբառագիտություն» (1911) գրքի վերջում:
8. Այս աշխատանքը լույս է տեսել հայերեն (տե՛ս «Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ը):
9. Հայկական գրատուն Կ. Պոլսում:

НЕКОТОРЫЕ НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА ГРАЧИЯ АЧАРЯНА ГРИГОРУ ХАЛАТЯНУ

В. Г. ВАРДАНИЯ

(Р е з ю м е)

В публикуемых 9-м письмах известного армянского лингвиста Грачия Ачаряна, адресованных профессору Лазаревского института Г. Халатяну, затрагивается ряд вопросов арменистики, в частности армянской диалектологии. Письма эти содержат ценные сведения о научной деятельности обоих ученых.

Публикуемые письма хранятся в Музее литературы и искусства имени Чаренца (архив Гр. Халатяна, отд. V, № 131—134, 141—142, 145, 147, 151) и написаны в 1900—1906 гг.